# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ | սեղաններ | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի հրամանով սահմանված պահանջներին համապատասխան, Մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Մանկական սեղանը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ։ Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում։ Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների։ Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ։ Մետաղական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հիմնակմախքով մանկական սեղանի չափսերն են` 1000 x 700 x 430 մմ (Ե x Lx Բ): Սեղանի աշխատանքային հարթության համար պետք է օգտագործվի լամինացված E0դասի ՓՏՍ ` 18 մմ հաստությամբ: Լամինացված ՓՏՍ E0դասի աշխատանքային հարթության եզրերը պետք է լինեն հղկված, մշակված և ողորկ, առանց ծլեպների, շրջափակվեն համապատասխան հաստության պլաստիկ եզրաժապավենով (օրինակ` PVC կամ համարժեք): Բոլոր անկյունները պետք է կլորացվեն, կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Սեղանի կմախքը պատրաստված է 25 x 25 x 2.0 մմ չափսի մետաղական քառանկյուն խողովակներից, կմախքի արտաքին չափերը` 800 x 600 x 381 մմ (Ե x L x Բ), որին` զոդման միջոցով ամրացվում են 20 x 20 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակից 4 մետաղական ոտքերը, որոնք էլ զոդման եղանակով շրջանաձև կապով միացվում են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | իրար հետ 15 x 15 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակով: Ոտքերը պետք է խցանված լինեն պլաստիկե խցաններով` 6 մմ հաստությամբ: Վերոգրյալ չափսերը պետք է խիստ համամասնորեն համապատասխանեն համապատասխան տարիքային խմբի համար պատրաստվող աթոռների չափսերին` դրանց միաժամանակյա հարմարավետ շահագործման նպատակով, որից ելնելով թույլատրվում են նշված չափսերից որոշակի շեղումներ: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ, մետաղը փոշեներկվում է բարձրակարգ, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ ներկանյութով` առանց անհարթությունների, միատոն և համասեռ ներկանյութով: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում` պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГРОСС ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում)։ |